ՄՂԹ.

Հետևեալ արժէքաւոր պատմական տեղեկութիւնները, ինչպէս դիւրին է գուշակել, հայթայթուած և ապա ծառայած են իրը գրական ատաղձներ կամ նախանիւթեր՝ հռչակաւոր Հ. Զամչեանի Եռահատոր «Հայոց Պատմութեան»։

Բաց աստի ինքը նամակագիրը մատնանիշ կ՚ընէ նաև այն գլխաւոր աղբիւրները՝ որոնք իրեն օգտակար եղած են «Վահան սրբոյն Պետրոսի» գործին պատրաստութեանը։

Գերյարգելի աբբայ հօր իմոյ տեառն տեառն Յովհաննու բարեւնապետի
համբուրիւ աչոյն ողջոյն ի Քրիստոս

... Ընկալայ ընդ այսմ թղթոց և զպատմութիւն ժողովոյն հայոց գրելոց ի Վեր. Հ. Գրիգորէն և ժողովոյն քաղկեդոնի գրելոյ ի Վ. Հ. Պետրոսէն... տիրապէս խնդրեալն իմ պակասէր ի նոսին՝ այն ինքն են անուանք պատմողաց զայնոսիկ ժողովսն հայոց Կարնոյ, Շիրակվանայ, Տարսոնի, Սըսոյ և Աղանայ։ Եւ պատճառ խնդրելոյս է. զի հայք զայսոսիկ ժողովս բաց ի տարսոնի ժողովոյն ոչ ընդունին աստ. և ծիծաղին ևս և ծաղր առնեն. ո՞վ է ասեն, որ զնոսին պատմէ, ևն։ Ուստի և յաւուր միում ի խօսելն իմ ընդ Վրացւոյ միում անցաւորի՝ մեղադրէր զկլէմէս, թէ զինքնահնար ժողովոց պատմութիւնս առնէ։ Սա կարի իմն ներհակս խօսէր ի վերայ սրբոյն պետրոսի։ Եւ ի բռնադատիլն յընդունիլ թէ պետրոս է վէմ հաւատոյ և եկեղեցւոյ՝ որպէս ասաց քրիստոս, դու ես վէմ ևն. պատասխանեաց. անդ դուն ասէ նշանակէ զամենայն առաքեալս. որպէս ասէ յորժամ տէրն ասաց ‘երուսաղէմ... որ կոտորէիր ևն, ամենայն բնակչացն ևս ասաց։ Եւ ի խօսիլն նորա զայս ես ծիծաղեցայ. Ցանեայ՝ ասեմ, զի յակոբեան ես դու. և նա ասէ զիարդ. և ես յետ ծանուցանելոյ նմա ասացից ևն. զի՞նչ ասես. արդեօք յորժամ քրիստոս զայդ ևն. ասաց ցերուսաղէմ, միայն զբնակիչս ասաց, թէ միայն ցքաղաքն. և կամ միանգամայն։ Եւ նա ոչ գիտաց պատասխանել. ապա ես ասացի նմա. եթէ քրիստոս միայն ցբնակիչս ասաց, ուրեմն և բանքն քրիստոսի (դու ես վէմ) միայն առ մեռասանսն ուղղեցան ըստ հանգիտութեանդ։ Իսկ եթէ միայն ցքաղաքն ասաց, ապա և այն բան միայն առ պետրոս վերաբերի։ Ապա եթէ միանգամայն թէ ցքաղաքն և թէ ցբնակիչս ասաց, այս վասն այսորիկ միայն կարէ այսպէս իմանիլ ըստ ենթադրութեանդ՝ զի բնակիչքն երուսաղէմի՝ ի մէջ քաղաքի պարունակէին. ի նմա շրջէին, գնային, գային, ուտէին, ննջէին, զմարգարէս կոտորէին, և զառաքեալսն քարկոծ առնէին։ Ուրեմն ասեմ եթէ և այն բանն քրիստոսի առ պետրոս և առ միւս առաքեալսն ևս միանգամայն վերաբերէր ըստ այսմ քոյ հանգիտութեանդ, հարկ է՝ զի առաքեալքն պարունակեսցին ի պետրոս. իսկ դու ասեմ ե՞րբ մտեր յորովայն նորա և յաղիս նորա շաղեալ զոտս առաքելոցն համբուրեցեր ևն։ Եւ ի լսելն նորա զայս՝ գոյն երեսաց նորա շրջեցաւ. և ի թոթովելն նորա ասեմ. մի՞ ինչ չփոթիր, զի ես փառաւորագոյնս ևս գրեալ եմ զայս բանս ընդդէմ աստուածին քոյ յակոբայ։ Եւ եթէ ասեմ զայդ օրինակդ ոչ թողուս ի ձեռաց հանդերձ աստուածովդ քով՝ ոչ հանեմ զքեզ յաղեացն պետրոսի։ Իսկ եթէ ասեմ ծակես զորովայն նորա՝ իժ կոչեմ զքեզ։

Այսպէս խօսեցայ ընդ նմա. զի կարի իմն չարութեամբ և անզգամութեամբ խօսէր։...

Տրտմեցայ յոյժ վասն փոխման Հ. Յակոբին, որ պայծառ սիւն էր աղօթից ի վանս մեր։...

Ընդդիմագրութիւնն նալօղլուին մինչև ցայժմ երկու հատոր եղև քառածալ թղթով՝ զորս ետու կազմել. քանզի թախանձէր ստեփան աղայն՝ առնուլ ընթեռնուլ զնոսին. և ես կասկածելով՝ թէ տեսր ինչ մի անկցի ի ձեռս այլոց կազմել ետու. և ապա էառ զայն ստեփան աղայն. և զտիւ և զգիշեր ոչ թողու ի ձեռաց իւրոց։ Մի հատոր ևս լինի ի վերայ